

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզպետի 07.07.2011թ թիվ 63 կարգադրությամբ ստեղծված «Գեոդեզիային հարցերով զբաղվող» Շիրակի մարզային հանձնաժողովի 2013թ. չորրորդ նիստի
25.11.2013թ.

Մասնակցում էր հանձնաժողովի 7 անդամ

1. Օրակարգ 1. Վարչապետին կից կանանց խորհրդի կողմից արված հայտարարության ֆենարկում
2. Նոյեմբերի 25-ը՝ թրաֆիֆինգի դեմ պայքարի միջազգային օր
3. Քննարկում
4. Այլ հարցեր

1. Լսեցին՝ Հանձնաժողովի նախագահ, մարզպետի տեղակալ Հ. Արեակյանին, ով ողջունեց հանձնաժողովի անդամներին, ներկայացրեց օրակարգի հարցերը: Օրակարգը հանձնաժողովի անդամների կողմից հաստատվեց միաձայն:

2. Լսեցին՝ Հանձնաժողովի նախագահ, մարզպետի տեղակալ Հ. Արեակյանին, ով ներկայացրեց վարչապետին կից կանանց խորհրդի կողմից արված հայտարարությունը:

3. Լսեցին՝ հանձնաժողովի նախագահ Հ. Արեակյանին, ով ներկայացրեց թրաֆիֆինգի միջազգային օրվա խորհուրդը:

Արտահայտվեցին՝ 1. Լուսինե Գինոսյանը

Նա խոսեց այն մասին, որ անհրաժեշտ է հասարակության լայն խավերին հասանելի դարձնել կանանց խորհրդի կողմից արված հայտարարությունը և <<Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին>> ՀՀ օրենքը հանրության համար առավել մատչելի և հասանելի ձևով լուսարձակել:

2. Հարություն Արեակյանը

Նա նեց, որ հայտարարության հետ լիովին համաձայն եմ, կիսում եմ կանանց խորհրդի կարծիքն ամբողջությամբ և նախապատրաստել եմ գրություն կանանց խորհրդի առաջիկա նիստին ներկայացնելու համար: Ահա տեքստի բովանդակությունը.

<<Համաձայն եմ հայտարարության բովանդակության հետ և գտնում եմ, որ այն անհրաժեշտ է դարձնել լայն հասարակայնության սեփականությունը: Հեռուստատեսությունը և մամուլը հեղեղված են հասարակական կազմակերպությունների, հասարակական շարժումների,

ճաղաճական գործիչների կողմից ներկայացվող սխալ մեկնաբանություններով, վիրավորական արտահայտություններով, ինչը շատ ավելի մատչելի ու հասանելի է լայն խավերին: Այնինչ՝ պատասխանատու կառույցների կողմից հնչեցվող «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի մեկնաբանությունները հավասարազոր հնչեղ և համոզիչ չեն: Օրենքի վրա հարձակվողները ընտրում են դիտարժան շունները, որոնց ժամանակ համարժեք պատասխան չի տրվում թյուր մեկնաբանություններին»:

3. Արթուր Գրիգորյանը.

Նա խոսեց թրաֆիկինգի կանխարգելմանն ուղղված աշխատանքների մասին և նշեց, որ 2013թ-ին մարզում թրաֆիկինգի որևէ դեպք չի արձանագրվել:

Հանձնաժողովի նախագահ Հ. Արեակյանը ամփոփեց հանձնաժողովի աշխատանքը և հանձնարարականներ տվեց ըստ ոլորտների նախապատրաստել տեղեկատվություն՝ հաշվետվության մեջ ներառելու համար:

Նիստը որոշեց. 1. Հանձնարարել հանձնաժողովի անդամներին մինչև ս/թ դեկտեմբերի 28-ը ներկայացնել տեղեկատվություն՝ ըստ համակարգած ոլորտների, հաշվետվության մեջ ներառելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Արեակյան

Քարտուղար՝

Լ. Գորգինյան